

պայի հանրային խղճատանքին մատուցուելիք այդ հատորին վրայ արմաշականը կը հաւատար այնքան, որքան այդ օրերու արտասահմանեան պրոպականտիստները թերթով, հանդէսով, ուղերձներով, հայ ու եւրոպական կարեւոր լեզուներով: Հոյակապ ձեռնա՛րկ: Որ խանդավառեց ընկեր Մաթիկը, անոր գիտունի փառասիրութիւնները ու ազգասէրի հերոսութիւնները գոհացնող: Չէր ըսեր նաեւ, թէ որքան հաշտ էր այս ձեռնարկը իր խառնուածքին: Կա՞ր աւելի գերազանց պատեհութիւն մեր ժողովուրդը իր ցրիւ զանազանութեան մէջ ուսումնասիրելու, իրեն պէս օպյեկտիւ տեսակէտներով, գիտական, անկողմնակալ պատրաստութեամբ: Այս առաքելութիւնը պսակում մըն էր անոր վրիպած կեանքին: Ինչ որ արգիլուած էր իրեն վերին Հայաստանի դէգ բնակիչներով, կ'ըլլար մատչելի պահպանողական տարրերու «կողմից»:

Վա՞ր: Բայց յեղափոխականը ամբասիրէն կը զատուի անոր դէմ ախտագերծութեամբ մը:

Մա՞հր: Անիկա բառ է, գիրքերու երեսը: Կեանքին մէջ՝ բռնի կրուած վախ մը: Իրականութեան մէջ՝ ըոպէ մը միայն: Ահաւոր էր խաղաղութի՛ւնը այս մտածումները տարազած պահուն: Կը զգայի, թէ ամէնէն շատ անկեղծ էր այդ գաղափարին հետ: Մեր յեղափոխութեան ամէնէն խոր ուժը այս հաշտութեան մէջն է, այսինքն՝ մահը ըոպէ մը ընդունիլ կրնալու պարզութեան մէջ:

Մա՞հր: Բայց այո՛:

Այցելեց անոր թուրքերու տարագով, ասպատակներով, ճամբու բիւրազան արկածներով: Բայց ընկեր Մաթիկը գիտէ՛ր, թէ մահուան նկարագիրն է պատկեր ըլլալ միշտ ու մէկ անգամ իրանալ: Այնպէս անիկա սրտապնդեց տարակուսող եկեղեցականը, որ ահագին դժուարութիւններէն կը թուէր ազդուած: «Տփղիսից... Ատանա՛»: Սո՞ւտ՝ ուղեգիծը: Ոչ անշուշտ, քանի որ հոն էր ինքը: Ատանայէն Պրուսա, Պոլիս եւ Զմիւռնիա...: Հարկա՛ւ: Առաջնորդը սրբագրեց անոր խակութիւնները